



INVIA
INVESTMENTS

Հաստատված է «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ

04/08/2024թ. Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից

Ուժի մեջ է 14/08/2024թ-ից

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի կողմից որպես 100% ապահովվածության չդասակարգվող հաճախորդների դիրքերը փակելու կարգի մասին («PRR2» ռիսկի նորմատիվի՝ 0-ից ցածր արժեք ունենալու դեպքում)

Բովանդակություն

1. Ընդհանուր դրույթներ
2. Հասկացություններ և հապավումներ
3. Դիրքը փակելու կարգ
4. Այլ դրույթներ
5. Հավելված №1

1. Ընդհանուր դրույթներ

Սույն՝ «Բրոքերային ծառայությունների մատուցման ընթացքում «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի կողմից որպես մինչև 100% ապահովածության չդասակարգվող կատեգորիայի հաճախորդների դիրքերը փակելու կարգի մասին («PRR2» ռիսկի նորմատիվի՝ 0-ից ցածր արժեք ունենալու դեպքում)» Կանոնակարգը (այսուհետ՝ «Կանոնակարգ») «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Բրոքեր») կողմից ընդունված ներքին իրավական ակտ է, որը սահմանում է բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում հաճախորդի դիրքի փակման կարգը («PRR2» ցուցիչի 0-ից պակաս արժեք ունենալու դեպքում):

2. Հասկացություններ և հապավումներ

- 2.1. Կանոնակարգում օգտագործվում են հետևյալ հասկացությունները և հապավումները՝
 - 2.1.1. Ժամանակավորապես չծածկված դիրք՝ արժեթղթի կամ արտարժույթի մասով չծածկված դիրք, որը որոշվում է մինչև որոշակի ժամկետ մարման ենթակա պարտավորություններով:
 - 2.1.2. Դիրքերի փակում՝ միջոցներ, որոնք ձեռնարկվել են նվազագույն մարժան նվազեցնելու և (կամ) հաճախորդի պորտֆելի արժեքը մեծացնելու համար («PRR2» ցուցիչի 0-ից պակաս արժեք ունենալու դեպքում):
 - 2.1.3. Հաճախորդի պորտֆել՝ Բրոքերի ներքին հաշվառման համակարգում դրամական միջոցների, արժութային գործիքների, հաճախորդի պահանջների և պարտավորությունների վերաբերյալ տվյալները խմբավորելու և պահելու կառուցվածքային միավոր՝ բոլոր այն գործարքների վերաբերյալ տեղեկատվության ամփոփմամբ, որոնք կապված են Հաճախորդի միջոցների և/կամ արտարժույթի գործիքների շարժի և դրամական միջոցների և/կամ արտարժույթի գործիքների, արտարժույթի շուկայում զուտ բաց դիրքերի մնացորդների որոշման հետ:
 - 2.1.4. «Նվազագույն մարժա»՝ արժեք, որը հաշվարկվում է սույն Կանոնակարգի Հավելված 1-ում նշված բանաձևով:
 - 2.1.5. «Սկզբնական մարժա»՝ արժեք, որը հաշվարկվում է սույն Կանոնակարգի Հավելված 1-ում նշված բանաձևով:
 - 2.1.6. Չծածկված դիրք՝ ծրագրված դիրք, որի արժեքը բացասական է:
 - 2.1.7. Դիրքերի փակումը սահմանափակող ժամանակ՝ Յուրաքանչյուր առևտրային օրվա ժամը 16:00-ն, մինչև երբ «PRR2» արժեքի 0-ից ցածր նվազելը հանգեցնում է այդ առևտրային օրվա ընթացքում Հաճախորդի դիրքերի փակմանը:
 - 2.1.8. Հաճախորդի իրացվելի պորտֆելի/ենթապորտֆելի կազմ — պլանավորված դիրքերի հավաքածու, որոնք հաշվարկվում են յուրաքանչյուր թողարկողի (արժեթղթի համար պատասխանատու անձի) արժեթղթերի համար՝ նրանց սեփականատերերին տրամադրելով նույն ծավալով իրավունքներ, ինչպես նաև դրամական միջոցների յուրաքանչյուր տեսակի արժույթի համար՝ համաձայն սույն Կանոնակարգի Հավելված 1-ի:
 - 2.1.9. Հաճախորդի իրացվելի պորտֆելի/ենթապորտֆելի արժեք՝ արժեք, որը

հաշվարկվում է սույն Կանոնակարգի Հավելված 1-ով նախատեսված բանաձևով:

- 2.1.10. Հաճախորդի ենթապորտֆել՝ Հաճախորդի պորտֆելի շրջանակներում Հաճախորդի՝ որոշակի չափանիշով խմբավորված ակտիվների (դրամական միջոցներ (ներառյալ արտարժույթ), արժեթղթեր, ներառյալ օտարերկրյա թողարկողների արժեթղթերը), այդ ակտիվների հետ ավարտված առևտրային և ոչ առևտրային գործարքներից ստացված պարտավորությունները, ինչպես նաև Բրոքերի նկատմամբ Հաճախորդի պարտքերը և վճարային այլ պարտավորությունները, ներառյալ, բայց չսահմանափակվելով, ցուցանիշների հաշվարկման նպատակով: Հաճախորդի մեկ պորտֆելի շրջանակներում Հաճախորդը կարող է ունենալ խմբավորված մի քանի ենթապորտֆելներ, այդ թվում՝ ըստ գործարքների կատարման և (կամ) հաշվառման վայրի: Հաճախորդի մեկ ենթապորտֆելում ընդգրկված դրամական միջոցները (ներառյալ արտարժույթը), արժեթղթերը, այլ ակտիվները և պարտավորությունները չեն կարող միաժամանակ ներառվել Հաճախորդի մեկ այլ ենթապորտֆելում:

3. Դիրքի փակման կարգ

- 3.1. Բրոքերը հաշվարկում է ռիսկի հետևյալ նորմատիվները (Portfolio risk ratio). հաճախորդի հանձնարարականների կատարման ժամանակ ռիսկի ծածկման նորմատիվ (այսուհետ՝ «PRR1»);
Հաճախորդի պարտֆելի արժեքի փոփոխման ժամանակ ռիսկի ծածկման նորմատիվ (այսուհետ՝ «PRR2»):
- 3.2. «PRR1» և «PRR2»-ի հաշվարկը Բրոքերն իրականացնում է համաձայն սույն Կանոնակարգի Հավելված 1-ի:
- 3.3. Բրոքերը իրական ժամանակում ծրագրային ապահովման և/կամ OpenAPI-ի միջոցով Հաճախորդին տրամադրում է տեղեկատվություն Հաճախորդի պորտֆելի/ ենթապորտֆելի իրացվելիության արժեքի, «Սկզբնական մարժայի» և «Նվազագույն մարժայի» չափի, ինչպես նաև «PRR1» և «PRR2» արժեքների վերաբերյալ:
- 3.4. «PRR2»-ի նվազագույն թույլատրելի թվային արժեքը սահմանվում է 0:
- 3.5. Եթե «PRR2»-ը 0-ից ցածր արժեք է ստանում, ապա Բրոքերը սույն Կանոնակարգի 3.7 կետով նախատեսված ժամկետներում միջոցներ է ձեռնարկում դիրքերը փակելու համար, բացառությամբ 3.5.1 և 3.5.2 կետերում նշված դեպքերի:
- 3.5.1. Սույն կետի առաջին պարբերության պահանջները չեն կիրառվում, եթե «Նվազագույն մարժա»-ի արժեքը 0 է:
- 3.5.2. Բրոքերը չի կատարում դիրքերը փակելու գործողություններ, եթե մինչև այդ գործընթացի ավարտը «PRR2»-ը դրական արժեք է ընդունում:
- 3.6. Փակման դիրքերը չեն ներառում Բրոքերի այն գործողությունները, որոնք կատարվել են հաճախորդի կողմից հաճախորդի հաշվին գործարք կատարելու (պայմանագիր կնքելու) համար Բրոքերին տրված/ուղարկված հանձնարարականի հիման վրա, որը սահմանում է կոնկրետ արժեթղթեր և (կամ) արտարժույթ և դրանց քանակը:
- 3.7. «PRR2»-ի՝ 0-ից ցածր արժեք ընդունելու դեպքում Բրոքերը փակում է հաճախորդի

դիրքերը հետևյալ ժամկետներում.

3.7.1. Եթե առևտրային օրվա ընթացքում մինչև դիրքերի փակումը սահմանափակող ժամանակը (16:00:00) «PRR2»-ն ընդունում է 0-ից ցածր արժեք, Բրոքերը փակում է դիրքերը այդ առևտրային օրվա ընթացքում:

3.7.2. Եթե «PRR2»-ն առևտրային օրվա ընթացքում դիրքերի փակումը սահմանափակող ժամանակից հետո ընդունում է 0-ից ցածր արժեք, ապա Բրոքերը հաճախորդի դիրքերը փակում է ոչ ուշ, քան այս իրադարձությունը տեղի ունեցած առևտրի օրվան հաջորդող մոտակա առևտրային օրվա դիրքերի փակումը սահմանափակող ժամանակը:

3.7.3. Եթե մինչև Հաճախորդի դիրքերը փակելը արժեթղթերով և (կամ) արտարժույթով կազմակերպված առևտրային գործարքը կասեցվել է, և դրանց վերականգնումը տեղի է ունեցել դիրքերի փակումը սահմանափակող ժամանակից հետո, ապա Բրոքերը փակում է դիրքերը ոչ ուշ, քան «PRR2»-ի 0-ից ցածր արժեք է ընդունելու առևտրային օրվան հաջորդող մոտակա առևտրային օրվա՝ դիրքերի փակումը սահմանափակող ժամանակը:

3.8. «PRR2»-ի՝ 0-ից ցածր արժեք ընդունելու դեպքում Բրոքերը փակում է հաճախորդի դիրքերը՝ հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները.

3.8.1. Բրոքերը փակում է հաճախորդների դիրքերը, ինչի արդյունքում «PRR2»-ն ընդունում է զրոյական արժեքից ավելի մեծ արժեք («Նվազագույն մարժայի» դրական արժեքի դեպքում)

3.8.2. Երբ Բրոքերը փակում է դիրքը նախքան «PRR2»-ը սույն Կանոնակարգի 3.8.1 կետին համապատասխանեցնելը թույլատրվում է նվազեցնել «PRR1»-ը՝ համեմատած դրա նախկին բացասական արժեքի հետ:

3.8.3. Բրոքերը փակում է Հաճախորդների դիրքերը անանուն առևտրային հարթակներում՝ առաջնահերթության սկզբունքով:

3.8.4. Անանուն առևտրի հասանելիության բացակայության, անհրաժեշտ իրացվելիության և/կամ Բրոքերի վերահսկողությունից դուրս այլ պատճառներով՝ Բրոքերը իրեն իրավունք է վերապահում իրականացնել փակումը արտաբորսայական/չկարգավորվող շուկայում:

3.9. Բրոքերն իրեն իրավունք է վերապահում ինքնուրույն որոշել, թե որ գործիքներով/գործիքների խմբերով (արժեթղթեր/արտարժույթ) իրականացնել հաճախորդի դիրքերի փակումը:

3.10. Հաճախորդների դիրքերը փակվում են հիմնականում հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

- Դիրքերը փակելիս առաջնահերթությունը տրվում է առավել իրացվելի գործիքներին;
- Դիրքերը փակելիս հաշվի է առնվում ամենամեծ բացասական ազդեցությունը հաճախորդի իրացվելի պորտֆելի արժեքի վրա, այսինքն, առաջին հերթին, փակումը տեղի է ունենում այն գործիքներում, որոնց համար հաճախորդը ստացել է ամենամեծ վնասը փակման պահի դրությամբ;
- Դիրքերը փակելիս հաշվի է առնվում պարտքի արժույթը, այսինքն, պարտքի արժույթով արտահայտված գործիքները փակվում են առաջնահերթության սկզբունքով:

4. Այլ դրույթներ

- 4.1. Սույն Կանոնակարգում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարվում են Բրոքերի կողմից միակողմանիորեն:
- 4.2. Կանոնակարգը, ինչպես նաև դրանում կատարված փոփոխություններն ու լրացումները, Բրոքերի կողմից հրապարակվում են Բրոքերի պաշտոնական կայքում:
- 4.3. Հաճախորդներին խորհուրդ է տրվում կարդալ Ռիսկերի մասին հայտարարությունը, որը պարունակում է տեղեկատվություն մարժայի և չճածկված գործարքների կատարման հետ կապված ռիսկերի մասին, վերջինս հասանելի է՝ <https://inviabroker.com/>-ում (Կանոնակարգի Հավելված՝ «Ռիսկերի մասին հայտարարություն»):

01.02.2024թ.-ի «Բրոքերային ծառայությունների մատուցման ընթացքում «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի կողմից որպես 100% ապահովվածության չդասակարգվող հաճախորդների դիրքերը փակելու կարգի մասին («PRR2» ռիսկի նորմատիվի՝ 0-ից ցածր արժեք ունենալու դեպքում)» **Կանոնակարգի Հավելված 1**

1. Հաճախորդի հանձնարարականը կատարելիս Portfolio risk ratio-ն (PRR1) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$PRR1 = S - M0,$$

Որտեղ՝

S-ը՝ հաճախորդի պորտֆելի/ենթապորտֆելի արժեքն է՝ հաշվարկված սույն Հավելվածի 2-րդ կետի համաձայն,

M0՝ Սկզբնական մարժայի չափն է՝ հաշվարկված սույն հավելվածի 15-րդ կետի համաձայն:

Հաճախորդի պորտֆելի/ենթապորտֆելի արժեքի փոփոխման դեպքում Portfolio risk ratio-ն (PRR2) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$PRR2 = S - Mx,$$

Որտեղ՝

S-ը՝ հաճախորդի պորտֆելի/ենթապորտֆելի արժեքն է՝ հաշվարկված սույն Հավելվածի 2-րդ կետի համաձայն,

Mx՝ Նվազագույն մարժայի չափն է՝ հաշվարկված սույն հավելվածի 15-րդ կետի համաձայն:

2. Հաճախորդի պորտֆելի/ենթապորտֆելի արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$S = \sum_{i \in I} Q_i \times P_{i,j} \times FXRate_j,$$

Որտեղ՝

Q_i՝ i-րդ արժեթղթի կամ i-րդ արժույթի (այսուհետ՝ i-րդ գույք) համար պլանավորված դիրքի արժեքը՝ հաշվարկված սույն հավելվածի 3-րդ կետում նախատեսված բանաձևով, ի՛ հաճախորդի նշված պորտֆելի/ենթապորտֆելի արժեքը հաշվարկելիս պլանավորված դիրքերի արժեքների քանակը,

P_{i,j}՝ i-րդ գույքի գինը (փոխարժեքը)՝ արտահայտված j արժույթով՝ համաձայն սույն հավելվածի 13-րդ կետի,

FXRate_j — ԱՄՆ դոլարի նկատմամբ j արտարժույթի փոխարժեքը, որը որոշվում է սույն

հավելվածի 14-րդ կետի համաձայն: Եթե j արժույթը ԱՄՆ դոլարն է, ապա $FXRate_j$ ցուցանիչի արժեքը հավասար է 1-ի:

3. i -րդ գույքի համար նախատեսված դիրքի արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով

$$Q_i = A_i - L_i,$$

Որտեղ՝

A_i ՝ ցուցիչի արժեքը հաշվարկվում է սույն հավելվածի 5-րդ և 6-րդ կետերի համաձայն

L_i ՝ ցուցիչի արժեքը հաշվարկվում է սույն հավելվածի 7-րդ և 8-րդ կետերի համաձայն

4. Եթե i -րդ գույքը ներառված չէ իրացվելի գույքերի ցանկում, ապա դրա համար պլանավորված դիրքի արժեքը հավասար է 0-ի, եթե սույն հավելվածի 5-8-րդ կետերի համաձայն հաշվարկված A_i ցուցիչի արժեքի և L_i ցուցիչի արժեքի միջև կա դրական տարբերություն:

Եթե իրացվելի գույքերի ցանկը նախատեսում է i -րդ գույքի քանակի բազմապատիկ մինչև դրա նվազագույն ծավալը, և նշված քանակի սահմաններում պլանավորված դիրքի դրական արժեքը հավասար չէ 0-ի, նման գույքի համար պլանավորված դիրքի դրական արժեքը վերցվում է հավասար այս գույքի քանակին՝ դրա նվազագույն ծավալի բազմապատիկին:

5. Եթե i -րդ գույքը դրամական միջոցներ է i -րդ արժույթի միավորներով, ապա սույն հավելվածի 3-րդ կետով նախատեսված A_i ցուցիչի արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$A_i = Q_{i,0}^A + \sum_n Q_{i,n}^A,$$

Որտեղ՝

$Q_{i,0}^A$, i -րդ արժույթի միավորներով դրամական միջոցների գումարը՝ որպես հաճախորդի պորտֆելի/ենթապորտֆելի կազմում

$Q_{i,n}^A$, n -րդ պարտավորության առարկա հանդիսացող i արժույթի միավորներով դրամական միջոցների գումարը, որի կատարումը Բրոքերն ընդունում է որպես հաճախորդի պորտֆելի/ենթապորտֆելի կազմում

6. Եթե i -րդ գույքը հանդիսանում է i -րդ արժեթուղթ, ապա սույն հավելվածի 3-րդ կետով նախատեսված A_i ցուցիչի արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$A_i = Q_{i,0}^A + \sum_n Q_{i,n}^A,$$

Որտեղ՝

$Q_{i,0}^A$ ՝ հաճախորդի պորտֆելում/ենթապորտֆելում i -րդ արժեթղթերի մնացորդը

$Q_{i,n}^A$ ՝ n -րդ պարտավորության առարկա հանդիսացող i -րդ արժեթղթերի քանակը, որոնց կատարումն ընդունվում է Բրոքերի կողմից որպես հաճախորդի պորտֆելի/ենթապորտֆելի կազմում

7. Եթե i -րդ գույքը դրամական միջոց է՝ i արժույթի միավորներով, ապա սույն հավելվածի 3-րդ կետով նախատեսված L_i ցուցիչի արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$L_i = \sum_k Q_{i,k}^L + Q_{i,broker}^L + Q_i^L$$

Որտեղ՝

$Q_{i,k}^L$ ՝ k -րդ պարտավորության առարկա հանդիսացող i արժույթի միավորներով արտահայտված դրամական միջոցների գումարը, որի կատարումը պետք է իրականացվի հաճախորդի պորտֆելում/ենթապորտֆելում ընդգրկված գույքի հաշվին

$Q_{i,broker}^L$ ՝ սույն հավելվածի 9-րդ կետի համաձայն հաշվարկված արժեք

Q_i^L ՝ սույն հավելվածի 10-րդ և 12-րդ կետերի համաձայն հաշվարկված արժեք

8. Եթե i -րդ գույք է համարվում i -րդ արժեթուղթը, ապա սույն հավելվածի 3-րդ կետով նախատեսված L_i ցուցիչի արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$L_i = \sum_k Q_{i,k}^L + Q_i^L,$$

Որտեղ՝

$Q_{i,k}^L$ ՝ k -րդ պարտավորության առարկա հանդիսացող i -րդ արժեթղթերի քանակը, որոնց կատարումը պետք է իրականացվի հաճախորդի պորտֆելում/ենթապորտֆելում ընդգրկված գույքի հաշվին.

Q_i^L — սույն հավելվածի 11-րդ և 12-րդ կետերի համաձայն հաշվարկված արժեք

9. $Q_{i,broker}^L$ ցուցիչը, որը նախատեսված է սույն հավելվածի 7-րդ կետով, ներառում է վարձատրության և (կամ) ծախսերի փոխհատուցման (վճարման) գումարները i արժույթի միավորներով, որոնց վրա բրոքերն իրավունք ունի հիմնվել բրոքերային ծառայության պայմանագրով:

10. Եթե i -րդ գույքը դրամական միջոց է i արժույթի միավորներով, սույն Հավելվածի 7-րդ

կետով նախատեսված Q_i^L ցուցիչի արժեքը հաշվարկվում է որպես հաճախորդի պորտֆելի/ենթապորտֆելի կազմում երրորդ անձից ստացված i արժույթի միավորներով արտահայտված միջոցների չափով, բացառությամբ հետևյալ անձանցից ստացված միջոցների՝

- արժեթղթերի շուկայի պրոֆեսիոնալ/որակավորված մասնակցից;
- քլիրինգային կազմակերպությունից;
- ներդրումային ֆոնդերի, փայերով ներդրումային ֆոնդերի և ոչ պետական կենսաթոշակային ֆոնդերի կառավարող ընկերությունից;
- բաժնետիրական ներդրումային ֆոնդից;
- օտարերկրյա իրավաբանական անձից, որն իր անձնական օրենքին համապատասխան իրականացնում է սույն 10-րդ կետի 2-5-րդ ենթակետերով նախատեսված անձանց կողմից իրականացվող գործունեության, կամ դրան նման գործունեություն և որը գրավոր, իրավաբանական անձի լիազորված անձի կողմից ստորագրված հավաստիացում է տվել իր անձնական օրենքին համապատասխան նման գործունեության համապատասխան տեսակ իրականացնելու իրավունքի մասին;
- արժեթղթերի թողարկողից՝ արժեթղթերի գծով եկամուտների վճարման դեպքում;
- ֆիզիկական անձից;
- սույն 10-րդ կետի 2-7-րդ ենթակետերում չնշված իրավաբանական անձից, եթե նրանից դրամական միջոցների չափը ստացվել է այն պայմանագրով, որը վարկային պայմանագիր կամ փոխառության պայմանագիր չէ, որով նշված իրավաբանական անձը պարտատեր է, կամ պայմանագրով, որի կողմեր են հանդիսանում Բրոքերը, նրա Հաճախորդը և նշված իրավաբանական անձը, որն իր հերթին Հաճախորդին տրամադրում է միջոցներ վերադարձելի հիմունքներով, որի համաձայն Բրոքերը տվյալ անձին է փոխանցում հաճախորդի միջոցների և (կամ) հաճախորդի տրամադրության տակ գտնվող արժեթղթերի մասին ամբողջ տեղեկատվությունը՝ սույն հավելվածով նախատեսված բոլոր ցուցիչների հաշվարկման համար:

11. Եթե i -րդ գույքը i -րդ արժեթուղթ է, ապա սույն հավելվածի 8-րդ կետով նախատեսված Q_i^L ցուցիչի արժեքը հաշվարկվում է որպես Հաճախորդի՝ երրորդ անձից փոխառության պայմանագրով (որի կողմ չի հանդիսանում Բրոքերը) որպես փոխառություն ստացած i -րդ գույքի քանակ, կամ պայմանագրով, որի կողմերն են Բրոքերը, նրա Հաճախորդը և նշված անձը, որի համաձայն Բրոքերը նշված անձին է փոխանցում տեղեկատվություն բրոքերի տրամադրության տակ գտնվող հաճախորդի գույքի մասին, որն անհրաժեշտ է սույն Հավելվածով նախատեսված բոլոր ցուցիչները հաշվարկելու համար: Սույն կետով նախատեսված արժեթղթերը և թանկարժեք մետաղները Q_i^L ցուցիչի հաշվարկում հաշվի չեն առնվում, եթե դրանք ներառված են $Q_{i,k}^L$ ցուցիչում:

12. Սույն Հավելվածի 10-րդ և 11-րդ կետերում հաշվարկված ցուցիչների արժեքները

համապատասխանաբար կրճատվում են դրամական միջոցների չափով, երրորդ կողմին վերադարձված արժեթղթերի քանակով, որից Հաճախորդը ստացել է նշված միջոցները, արժեթղթերը, պայմանով, որ Բրոքերն ունի դրանց վերադարձը հաստատող փաստաթղթեր:

13. $P_{i,j}$ -ում i -րդ գույքի գինը որոշվում է նշված գույքի հետ վերջին կնքված պայմանագրի գնի (այսուհետ՝ վերջին գործարքի գին) վերաբերյալ տեղեկատվության հիման վրա, որը Բրոքերային ծառայության պայմանագրով առևտրի կազմակերպչի կողմից տրամադրվել է Բրոքերին, բացառությամբ սույն կետի երկրորդ և երրորդ ենթակետերում նշված դեպքերի:

Առևտրի կազմակերպչի մոտ, որի հետ Բրոքերը ունի սպասարկման պայմանագիր i -րդ արժեթղթի կազմակերպված առևտրի ժամանակավոր բացակայության/դադարման դեպքում, $P_{i,j}$ -ի i -րդ արժեթղթի գինը որոշվում է նշված արժեթղթով վերջին գործարքի գնի վերաբերյալ տեղեկատվության հիման վրա, որն ավարտվել է առևտրի այլ կազմակերպչի աճուրդներում, որտեղ այս արժեթուղթը ընդունված է բորսայական առևտրի համար:

$P_{i,j}$ -ի մեկ i -րդ արժեթղթի գինը որոշվում է միջին գնով, որը հիմնված է Bloomberg կամ Refinitiv տեղեկատվական համակարգում հրապարակված լավագույն գնման գնի և նշված արժեթղթերի վաճառքի լավագույն գնի վրա, պայմանով, որ նշված արժեթուղթը պարտատոմս է, և բրոքերային ծառայության պայմանագրի լրացուցիչ պայմանագրում նշվում է տեղեկատվական համակարգը, որի գնանշումների հիման վրա որոշվում է պարտատոմսերի գինը, և պայմանական գնանշումը, որն օգտագործվում է նշված տեղեկատվական համակարգում բրոքերային ծառայության պայմանագրում դրանք նույնականացնելու համար:

Պարտատոմս համարվող մեկ i -րդ արժեթղթի գինը որոշվում է՝ հաշվի առնելով դրա վրա կուտակված տոկոսային (կուպոնային) եկամուտը:

$P_{i,j}$ -ի i -րդ արժույթի փոխարժեքը j -րդ արժույթի նկատմամբ որոշվում է սույն հավելվածի 14-րդ կետով նախատեսված ԱՄՆ դոլարի նկատմամբ j -րդ արժույթի փոխարժեքի որոշման կանոններով:

14. $FXRate_j$ ցուցիչի արժեքները որոշվում են ԱՄՆ դոլարի նկատմամբ j արտարժույթի վերջին փոխարժեքի վերաբերյալ տեղեկատվության հիման վրա՝ ձևավորված արտարժույթով կազմակերպված առևտրի ընթացքում, բացառությամբ սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքերի:

Եթե Հաճախորդի պորտֆելի կազմում ընդգրկված գույքի հաշվին կնքված պայմանագրի պայմանների համաձայն, j արժույթով արտահայտված դրամական պարտավորությունները կատարվում են ԱՄՆ դոլարով համաձայնագրի կողմերին հայտնի ֆիքսված փոխարժեքով, ապա $FXRate_j$ ցուցիչը ընդունում է նշված ֆիքսված փոխարժեքի արժեքը դրա հրապարակման պահից, կամ, եթե դա նախատեսված է

բրոքերային ծառայության պայմանագրով, այն պահից, երբ այն հայտնի է դարձել Բրոքերին.

15. Սկզբնական մարժայի չափը M_0 և նվազագույն մարժայի չափը M_x հաշվարկվում են յուրաքանչյուր հաճախորդի պորտֆելի/ենթապորտֆելի համար՝ օգտագործելով հետևյալ բանաձևերը՝

$$M_0 = \sum_j R_j \times FXRate_j,$$

$$M_x = 0,5 \times M_0,$$

Որտեղ՝

$$R_j = R_{j,0} = -\sum_i \text{Min} \left[\Delta S_{i,j,0} \left(-D_{i,j}^+ \right); \Delta S_{i,j,0} \left(D_{i,j}^- \right) \right];$$

$FXRate_j$ ՝ սույն Հավելվածի 2-րդ կետով նախատեսված ցուցիչը.

$D_{i,j}^+$ ՝ i -րդ գույքի գնի (փոխարժեքի) նվազման ռիսկի սկզբնական դրույքաչափի արժեքը

$D_{i,j}^-$ - i -րդ գույքի գնի (փոխարժեքի) բարձրացման ռիսկի սկզբնական դրույքաչափի արժեքը

Եթե i արժույթը ԱՄՆ դոլարն է, ապա ռիսկի սկզբնական դրույքաչափի արժեքը հավասար է 0-ի:

$\Delta S_{i,j,n}(D) = P_{i,j} \times Q_i \times D - Q_i$ -ի համար, որը պլանավորված դիրքի արժեքն է i արտարժույթի համար՝ արտահայտված j արտարժույթով կամ պլանավորված դիրքի արժեքը i արժեթղթի համար՝ արտահայտված j արժույթով.

$\Delta S_{i,0,n}(D) = FXRate_i \times (Q_i + QR_i) \times D - Q_i$ -ի համար ԱՄՆ դոլարով արտահայտված i արտարժույթի գումարը.

$P_{i,j}$ և $FXRate_j$ - սույն Հավելվածի 2-րդ կետով նախատեսված ցուցիչը: